ԺԱ.

ՓԻԼԻՊՊՈՍ ԿԱԹՈՂԻԿՈՍ. ՌՋԲ = 1640. ՀՈԿՏ. 12.[1]

(Ցորդորէ զԼեհահայս օգնել իրերաց, և լսել Մոււսարեկին՝ որ ի չահեն Պարսից դեսպան գնայր առ թագաւորն Լեհաց)։

Է

ՅԻՍՈՒՍԻ *Քրիստոսի ծառայ Փիլիպպոս կաթողիկոս ամենայն Հայոց, ի վիճակէ սրբազան Առաքելոյն Բարդուղիմէոսի, յաջորդ Սրբոյ Առաքելոյն Թադէոսի, և փոխանորդ Սրբոյն Գրիգորի Հայոց Լուսաւորչի և բազմաչարչար նահատակի և սրբազնակատար հեղինակի, և պատրիարգ Վաղարշապատու քրիստոսահիմն և լուսանկար երկնահանգէտ սրբոյ աթոռոյն Էջմիածնի. Յորմէ ժամանեալ հասցէ գիր աւրհնութեան և նամակ պահպանութեան, չնորհք առաքելական և աստուածային աւրհնութիւնն ի վերայ տիրապահ և քրիստոսախնամ քաղաքացդ, Իլովայ, Կամենիցու, Եազլովցայու, Զամոչցայու և Լուծկայու. Լուսաւորչի աւրհնեալ հօտի ժողովրդեանդ. որբանուէր քահանայցդ, տեառնափոխ դատաւորացդ, պերճապատիւ ազատացդ, արգասապատիւ մեծատանցդ, և այլոց ամենեցունց, աղքատաց և ռամկաց, մեծամեծաց և փոքունց, արանց և կանանց, ծերոց և տղայոց, երիտասարդաց և կուսից, և ամենայն չափու հասակի, միագումար ամենեցուն. Շնորհք ընդ ձեզ և խաղաղութիւն յԱստուծոյ Հօրէ մերմէ և ի Տեառնէ Յիսուսէ Քրիստոսէ, և ի Ս. Հոգւոյն կենարարէ և բարերարէ. ամէն. Աւրհնութիւն Հօր, պահպանութիւն Որդւոյ, և նախախնամութիւն ամենասուրբ Հոգւոյն, միշտ և հանապազ ի վերայ ձեր լիցի, և որ ըստ օրէ լցուսցէ զձեզ փառօք և արգասալիր ճոխութեամբ, իբրեւ զորթս և զոստ սաղարթախիտ և պտղալից դրախտ տնկեալ ի գնացս Հոգւոյն վտակաց. կալ մնալ ձեզ խաղաղական կենօք և պարագայց ամօք մինչ ի խորին ծերութիւն, ի կամս բարերարին Քրիստոսի Աստուծոյ մերոյ. անբասիր և անբռնադատ կենօք, յարազուարճ ուրախութեամբ. ամէն։ Այլ և աւրհնեսցէ զձեզ Տէր Աստուած մեր և զարդա-*

1. Բնագրին վրայ Թուականն պակսի. բայց կոնդակին ետեւը՝ ընդունողաց մէկն գրեր է այլազգերէն. «Պու պիդիք եաղըլմըշ Սուրբ Էջմիածնատա. Թվ. ՌՁԲ, հոկտեմբեր ԺՆ»։